

Մ աշտոցի Ա րձագանգ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի ամսաթերթ
WWW.SOURPHAGOP.ORG (25-րդ տարի)

Այս թիւով.....

Մարտ ամսուան բացատրական տունացոյց Էջ 2-9,14-15

Քառասուն Մանկունք
Կ. Պոլսոյ Տիեզերական Ժողով (381թ.)
Սուրբ Թեոդորոս Զօրավար
Մեծ Պահքի 7 Կիրակիները
Ա. Բուն Բարեկենդան
Բ. Արտաքսման
Գ. Անառակին
Դ. Տնտեսին
Միջինք
Ե. Դատաւորին

Նկարներ Կիրակնօրեայէն Էջ 10-11
Մանուկներու եւ պատանիներու 2025-ի
Մեծ Պահքի օրացոյց
Ս. Յովհաննէս Երուսաղէմացի
Ս. Յովհաննէս Օձնեցի
Ս. Յովհաննէս Որոտնեցի
Ս. Գրիգոր Տաթևացի
Տաթևի Վանք, Ճոպանուղի
Ո՞րն է ճիշդ պատասխանը Էջ 16-19
Մեծ Պահքը Երբեակ Իմաստով Էջ 20

Մարտ 2025 (Լ տարի թիւ 7)



Պ...Պահք

Խաչքարի Հեղինակ՝ Ժողովրդական Վարպետ,
Ռուբեն Նալբանդյան

Ամսուան Համարը

«Երբ ծով կը պահէք, տրտումներու մի՛ ըլլաք կեղծաւորներուն նման, որոնք իրենց երեսը կը կախեն, որպէսզի մարդոց ցոյց տան թէ ծով կը պահեն: Վստահ եղէք, միայն ատիկա է անոնց վարձատրութիւնը: Ընդհակառակը, երբ դուն ծով կը պահես, օճէ՛ գլուխդ եւ լուա՛ երեսդ, որպէսզի մարդիկ չտեսնեն թէ ծով կը պահես, այլ՝ միայն Հայրը, որ անտեսանելի է եւ Հայրդ, որ կը տեսնէ կատարածդ, քեզ պիտի վարձատրէ յայտնապէս»:

Մատթէոս 6.16-18

Մարտ ամսուան բացատրական տօնացոյց

Շբթ. 1	Կոստանդնուպոլսոյ Սուրբ Ժողովի 150 Հայրապետներուն
Կիր. 2	Բուն Բարեկենդան
Բշ. 3	Ա. օր Մեծ Պահքի
Շբթ. 8	Սուրբ Թեոդորոս Զօրավար
Կիր. 9	Մեծ Պահքի Բ. Կիրակի՝ Արտաքսման
Կիր. 16	Մեծ Պահքի Գ. Կիրակի՝ Անառակին
Շբթ. 22	Ս. Յովհաննէս Երուսաղէմցի, Ս. Յովհաննէս Օձնեցի, Ս. Յովհաննէս Որոտնեցի, Ս. Գրիգոր Տաթևացի
Կիր. 23	Մեծ Պահքի Դ. Կիրակի՝ ՏՆՏԵՍԻՆ
Դշ. 26	ՄԻԶԻՆՔ
Շբթ. 29	Սուրբ Քառասուն Մանկունք
Կիր. 30	Մեծ Պահքի Ե. Կիրակի՝ ԴԱՏԱԻՈՐԻՆ

Պահք՝ 3-31



Սեբաստիոյ մէջ նահատակուած 40 զինուորներ (քառասուն մանկունք)

4-րդ դարու սկիզբը նահատակուած Քրիստոսի 40 վկաները Փոքր Հայքի տարբեր քաղաքներէն էին եւ Սեբաստիոյ կայսերական գունդին զինուորական ծառայութեան մէջ էին: Երբ Լիկիանոս կայսեր հրամանով Կեսարիայի դուքս Լիւսիասը հարցաքննութիւն կը կազմակերպէ բանակին մէջի քրիստոնէայ զինուորներ յայտնաբերելու նպատակով, անոնցմէ 40-ը, հաւատարիմ իրենց հաւատքին, անվեհեր պատասխաններով դատաւորներուն

Սվազի Ասեղնագործ

զայրոյթ կը պատճառեն եւ կը բանտարկուին: Չմեռնային ցուրտ գիշեր մը զիրենք կը նետեն Սեբաստիոյ մօտակայ

լիճը: 40-էն միայն մէկը չի կրնար տանջանքներուն դիմանալ: Դուրս ելլելով սառած ջուրէն, ան կը փորձէ փրկութիւն գտնել լճափին կառուցուած տան մէջ, սակայն այդպէս կնքելով մահկանացուն, կը զրկուի թե՛ երկրային և թե՛ երկնային կեանքէն: Լուսադէմին միւս բոլոր նահատակները կ'երեւին լոյսէ պսակներով զարդարուած:

Պահապան զինուորներէն մէկը, տեսնելով այդ, կը լեցուի Քրիստոսի հաւատքով և նետուելով լիճը, պսակակից կը դառնայ անոնց: Աստուածային հրաշքով ձմեռնային սառնամանիքը դիմակալած վկաները առաւօտեան կը նահատակուին: Անոնց նշխարները կ'ամփոփուին Սեբաստիոյ մէջ, ուր հետագային կը կառուցուի «Քառասուն մանկունք» 40 զմբեթանի տաճարը, որ կանգուն մնացած է մինչեւ Լենկթիմուրի արշաւանքը:

40 մանկանց (զինուորներու) պատմութիւնը կը յորդորէ կեանքի բոլոր դժուարութիւններուն մէջ հաւատարիմ մնալ Քրիստոսի հաւատքին, յաղթահարել դիւրահաճ գայթակղութիւնները՝ երկնային պսակին արժանանալու համար: Անոնց Յիշատակը կը տօնենք Միջինքին յաջորդող Շաբաթ օրը:

Այս Մեծ Պահքի ընթացքին յիշենք նաեւ կարօտեալները եւ մեր ունեցածէն անոնց ալ բաժին հանենք:

Մեծ Պահքը ունի **7 Կիրակիներ**, որոնք յատուկ եւ իմաստալից անուններ ունին.

Ա. Բուն Բարեկենդան

Մեծ Պահքին նախորդող Կիրակին է. բարեկենդան կը նշանակէ բարի կեանք՝ աշխարհիկ իմաստով ուրախութիւն, խրախճանք, իսկ կրօնական իմաստով՝ երանելի կեանք, ինչպէս Ադամը կ'ապրէր դրախտին մէջ արտաքսուելէն առաջ:

Բ. Արտաքսման

Ադամն ու Եւան իրենց անհնազանդութեան պատճառաւ երկար չճնացին դրախտին մէջ եւ արտաքսուեցան հոնկէ: Մեզի՝ մեղաւորներուս համար Քրիստոս ապաշխարութեամբ ցոյց տուաւ փրկութեան ճամբան, եւ դրախտին արժանանալու յոյսը:

Գ. Անառակին

Այս Կիրակին կը կրէ տուեալ օրուան ճաշու աւետարանի հատուածին անունը: Մեծ Պահքի ընթացքին մեր ուղեւորութիւնը կը նմանի Անառակ Որդիին ապաշխարութեան յաջորդող դէպի իր հօր տունը վերադարձին: Այս առակը կը կարդանք Ղուկասի Աւետարանին 15.11-32 ին մէջ:

Դ. Տնտեսին

Անառակի Կիրակին կը յաջորդէ Տնտեսի Կիրակին որ իր անունը կը ստանայ դարձեալ Յիսուսի խօսած առակներէն մէկէն: Այս առակը կը կարդանք Ղուկասի Աւետարանին 16.1-13 ին մէջ: Միջինքը տեղի կ'ունենայ այս Կիրակին յաջորդող Չորեքշաբթին:

Ե. Դատաւորին

Դարձեալ Յիսուսի առակներէն մէկէն կը ստանայ իր անունը, որ դատաւորի մը եւ յարատեւող այրիի մը առակն է, գոր կրնանք կարդալ Ղուկաս 18.1-8 ի մէջ:

Զ. Գալստեան Այս կիրակի օրուան առակը Քրիստոսի աշխարհ գալուն խորհուրդը կը բացատրէ: Այդ օրուան աւետարանական ընթերցումին վերջին համարը՝ Մատթէոս 23.39 Քրիստոսի Գալստեան կ'ակնարկէ:

Է. Ծաղկազարդ Այսպէս կը կոչուի Քրիստոսի փառաւոր մուտքը Երուսաղէմ, իր խաչելութիւնն ու յարութիւնը կանխող Մէկշաբթի օրը: Այդ օր մանուկները եկեղեցի կ'երթան զարդարուած մոմերով ու կը մասնակցին թափօրին:

Կ. Պոլսոյ Տիեզերական Ժողով (381թ.) Ընդհանրական եկեղեցւոյ առջեւ պատմութեան տարբեր ժամանակահատուածներու ընթացքին ծառայած են դաւանաբանական, վարդապետական, վարչակազմակերպչական խնդիրներ, որոնց պատասխանները տրուած են սրբագումար տիեզերական ժողովներու ընթացքին: Այդպիսի ժողովներէն էր նաեւ, 381 թուականին Թեոդոսիոս կայսեր հրամանով գումարուած Կ.Պոլսի Բ. տիեզերաժողովը:

Արիոսական վեճերու որպէս արդիւնք յայտնուած էր նոր հերետիկոսութիւն՝ գլուխ եւ պաշտպան ունենալով Կ. Պոլսոյ Մակեդոն արքեպիսկոպոսին, որ կը մերժէր Սուրբ Հոգիին աստուածութիւնը: Սոյն խնդրով գումարուած վերոյիշեալ տիեզերաժողովը վերահաստատեց Նիկիոյ ժողովին ընդունուած դաւանութիւնը եւ պաշտպանեց Սուրբ Հոգիին աստուածութեան վարդապետութիւնը՝ որդեգրելով «մի Աստուածութիւն, երեք անձեր» բանաձեւը: Ընդունելով սոյն տիեզերաժողովը Հայ եկեղեցին կը նշէ ժողովին մասնակից 150 սուրբ հայրապետներու յիշատակութեան օրը:

Սուրբ Թեոդորոս զօրավարը համաքրիստոնէական սուրբ է, որուն յիշատակութիւնը Հայ եկեղեցին կը տօնէ Մեծ պահքի առաջին շաբաթ օրը:

Ըստ վարքագիրներու ծնունդով Ամասիա քաղաքի Մարու գիւղէն էր, քրիստոնէայ բարեպաշտ ծնողներու զաւակ:

4-րդ դարու սկիզբէն Դիոկղետիանոսի հալածանքներու ժամանակ, ապացուցելու համար կուռքերու հնարովի և կեղծ ըլլալը, գիշերով կրակի կը մատնէ հեթանոսական Ռէա չաստուածուհիի մեհեանը: Այս արարքին համար բանտ կը նետուի և մեծագոյն չարչարանքներէն յետոյ 306թ. կը նահատակուի՝ այրուելով կրակի վրայ:

Սուրբ Թեոդորոս զօրավարը յայտնի է նաեւ որպէս «վիշապասպան», որ քաջութեամբ ու հաւատքով յաղթած է հսկայ վիշապի: Օտար եկեղեցիներուն մէջ յայտնի է նաև «Դիոն» անուամբ, որ յունարէն կը նշանակէ «նորեկ» զինուոր:

Կիլիկեան Հայաստանի Հռոմկլայի գաւառի Խալֆեթի աւանին մէջ կը գտնուէր Ս. Թեոդորոս եկեղեցին որուն մասին յիշատակութիւն կայ 1464 թուականի ձեռագիր յիշատակարանի մը մէջ:

Ա. Կիրակի Բուն Բարեկենդան

ԵՂԵՄ Աստուած ստեղծեց երկինքն ու երկիրը, ան ստեղծեց ծառերն ու ծաղիկները եւ աշխարհի բոլոր կենդանիները, ան ստեղծեց նաեւ Ադամն ու Եւան որոնք ուրախ կ'ապրէին դրախտի մէջ:



Բ. Կիրակի՝ Արտաքսման

ԱՂԱՄԻ ԵՒ ԵՒԱՅԻ

ԱՐՏԱՔՍՈՒՄԸ

Աղամ եւ Եւա Դրախտին մէջ ուրախ կ'ապրէին, Աստուած իրենց ամէն բան արտօնած էր ուտել, բացի իմաստութեան ծառի պտուղէն: Չար սատանան օձի կերպարանքով մօտեցաւ ու խաբէց Եւային ու Աղամին եւ անոնք կերան արգիլուած ծառի պտուղէն: Աստուած երբ իմացաւ շատ բարկացաւ եւ Աղամին ու Եւային արտաքսեց (դուրս դրաւ) դրախտէն:



Գ. Կիրակի՝ Անառակին

ԿՈՐՍՈՒԱԾ ՈՉԽԱՐԸ

Հովիւ մը 100 ոչխարներ ուներ, անոնցմէ մէկը կորսուեցաւ:

Հովիւը ձգեց իր 99 ոչխարները արօտավայրին մէջ եւ գնաց փնտռելու կորսուած ոչխարը եւ երբ գտաւ ուրախութեամբ իր ուսերուն վրայ դրաւ ոչխարը եւ վերադարձաւ միւսներուն մօտ:



Գ. Կիրակի Անառակին

ԿՈՐՍՈՒԱԾ ԴՐԱՄԸ Կին մը տասը արծաթ դահեկան ուներ: Անոնցմէ մէկը կորսնցուց, լոյսը վառեց եւ տունը ուշադրութեամբ աւելց, մինչեւ որ դահեկանը գտնէ:

Երբ գտաւ կորսուած դրամը կանչեց իր բարեկամուհիները ու դրացիները եւ ուրախացաւ անոնց հետ:

ԱՆԱՌԱԿ ՈՐԴԻՆ Մարդ մը երկու զաւակ ուներ: Կրտսերը հօրը ըսաւ.

«Հա՛յր, քու ստացուածքէդ ինծի ինկած բաժինը հիմա՛ տուր ինծի»: Եւ հայրը իր զաւակներուն միջեւ բաժնեց իր ունեցածը: Քանի մը օր ետք, կրտսեր զաւակը առաւ իր ամբողջ հարստութիւնը եւ հեռու երկիր մը գնաց: Հոն անառակ կեանք մը ապրելով՝ վատնեց հարստութիւնը եւ սպառեց իր ամբողջ ունեցածը:

Պատահեցաւ որ այդ երկրին մէջ մեծ սով մը տիրեց, երբ արդէն ինք սկսած էր աղքատանալ: Ուստի գնաց այդ երկրի քաղաքացիներէն մէկուն քով ծառայ եղաւ, եւ անիկա իր ազարակը դրկեց զինք՝ խոզ արածելու համար: Նոյնիսկ պատրաստ էր խոզերուն կերած աւելցուքէն իր փորը լեցնելու, սակայն ոչ ոք կու տար իրեն: Երբ անդրադարձաւ իր վիճակին, ուզեց վերադառնալ իր հօրը քով:

Տակաւին տունէն բաւական հեռու էր, երբ հայրը տեսաւ զինք ու գթաց, վազելով դիմաւորեց զայն, վիզին փաթթուեցաւ եւ համբուրեց: Որդին հօրը ըսաւ.

«Հա՛յր, մեղանչեցի Աստուծոյ եւ քեզի դէմ. այլեւս արժանի չեմ քու որդիդ կոչուելու»: Հայրը իր ծառաներուն հրամայեց. «անմիջապէս բերէք լաւագոյն պատմուճանք եւ հագցուցէք իրեն. Մատանի անցուցէք իր մատին եւ կօշիկ տուէք իրեն: Բերէ՛ք պարարտ հորթը, մորթեցէք, ուտենք եւ ուրախանանք: Որովհետեւ իմ այս զաւակս մեռած էր՝ ողջնցաւ, կորսուած էր՝ գտնուեցաւ»: Եւ սկսան խրախճանքի:



Դ. Կիրակի Տնտեսին

ՃԱՐՊԻԿ ՏՆՏԵՍԸ Մեծահարուստ մարդ մը կար, որ իր ստացուածքներուն վրայ տնտես մը ունէր: Երբ տնտեսին մասին մարդիկ ամբաստանութիւն ըրին՝ ըսելով թէ իր տիրոջ հարստութիւնը կը վատնէ, մեծահարուստը կանչեց զինք եւ ըսաւ. «Ի՞նչ են քու մասիդ այս ըսուածները: Քեզի յանձնուած բոլոր ստացուածքներու հաշիւը տուր: Այլեւս իմ տնտեսս չես կրնար ըլլալ»:



Տնտեսը ինքնիրեն խորհեցաւ. «Ի՞նչ կրնամ ընել. Ահա տէրս զիս տնտեսութեան պաշտօնէն կը գրկէ: Բանուորութիւն չեմ կրնար ընել, մուրալու կ'ամչնամ: Մակայն զիտեմ թէ ինչ պէտք է ընեմ, որ երբ տէրս զիս տնտեսութեան պաշտօնէն հեռացնէ, մարդիկ ընդունին զիս իրենց տուներէն ներս»: Ապա մէկ առ մէկ կանչեց իր տիրոջ պարտապանները եւ առաջինին հարցուց. «Որքա՞ն պարտք ունիս տիրոջս»: Անիկա պատասխանեց. «Երկու հարիւր թիթեղ ձեթ»: Տնտեսը ըսաւ. «Ահաւասիկ պարտամուրհակդ. Նստէ եւ անմիջապէս գրէ հարիւր»: Յետոյ հարցուց միւսին. «Դո՞ւն որքան պարտք ունիս»: Անիկա պատասխանեց. «Չորս հարիւր յիսուն պարկ ցորեն»: Տնտեսը ըսաւ. «Ահաւասիկ պարտամուրհակդ. նստէ եւ գրէ երեք հարիւր յիսուն»: Տէրը ասիկա լսելով՝ գովեց անիրաւ տնտեսը իր հնարամտութեան համար:

Որովհետեւ այս աշխարհի մարդիկը իրարու հանդէպ իրենց վարմունքին մէջ աւելի ճարպիկ են քան լոյսի որդիները: Եւ ես կ'ըսեմ ձեզի.- Աշխարհիկ հարստութիւնը գորածածեցէք այնպէս որ Աստուծոյ բարեկամութիւնը շահիք, որպէսզի երբ այս աշխարհէն ելլէք, ձեզ յաւիտենական յարկերու մէջ ընդունին:

Միջինք

Մուրբ 40 մանկանց տօնին նախորդող Չորեքշաբթի օրը Միջինք է, որովհետեւ կը հանդիպի Մեծ Պահքի կէսին: Այս օրը երկարատեւ պահքի շրջանին կէտը նուաճած ըլլալու աւետու՛մս է ու խնդութեան առիթ կը նկատուի: Մեղանները կը սարքուին պահքի յատուկ ուտելիքներով:

Հին աւանդութիւն էր որ Միջինքի օրը տուներէն ներս պատրաստուէր բաղարջ կոչուած հաց մը որուն մէջ կը պահուէր մանր երկաթեայ դրամ մը: Երբ տեղի կ'ունենար ընտանեկան հաւաքոյթ, հացը մաս առ մաս կը բաժնուէր եւ բոլորին ուշադրութիւնը կը կեդրոնանար գտնելու համար տարուան այն բախտաւոր անձը որուն հացի բաժնին մէջէն պիտի ելլէր երկաթեայ դրամը:

Դ. Կիրակի Տնտեսին

ԱՂՔԱՏ ՂԱԶԱՐՈՍ

Մեծահարուստ մարդ մը կար, որ բեռեզ եւ ծիրանի հագուստներ կը հագներ եւ ամէն օր փառաւոր խնճոյք կ'ըներ: Ղազարոս անունով աղքատ մըն ալ կար, անոր դրան առջեւ կը նստէր եւ կը յուսար իր փորը լեցնել մեծահարուստին սեղանի աւելցուքներով: Ղազարոս վերքերով ծածկուած էր, եւ շուներ կու գային իր վերքերը կը լզէին: Աղքատը մեռաւ եւ հրեշտակները զինք տարին Աբրահամի մօտ: Մեծահարուստն ալ մեռաւ եւ

թաղուեցաւ: Մինչ մեծահարուստը Դժոխքին մէջ կը տանջուէր, աչքերը բարձրացուց եւ հեռուն Աբրահամը տեսաւ, ինչպէս նաեւ Ղազարոսը՝ անոր քով: Մեծահարուստը աղաղակեց. «Հա՛յր Աբրահամ, ողորմէ՛ ինձի եւ դրկէ Ղազարոսը, որ մատին ծայրը ջուրին թաթիւ եւ զովացնէ լեզուս, որովհետեւ այս կրակին մէջ ծարաւէն կը տառապիմ»: Աբրահամ ըսաւ անոր. «Որդեակ, յիշէ՛ թէ ի՛նչպէս դուն քու կեանքիդ ընթացքին ամէն օր բարիք վայելեցիր, մինչ Ղազարոս չարչարուեցաւ: Հիմա անիկա հոս կը հանգստանայ, մինչ դուն հոն կը տառապիս: Գիտցի՛ր նաեւ, որ մեծ անդունդ մը կայ մեր եւ ձեր միջեւ: Եթէ ուզեն այստեղէն ձեր մօտ անցնիլ՝ չեն կրնար, եւ ոչ ալ մէկը հոնկէ մեր մօտ կրնայ գալ»: Մեծահարուստը ըսաւ. «Կ'աղաչեմ, հա՛յր, Ղազարոսը դրկէ իմ հօրս տունը, ուր հինգ եղբայրներ ունիմ, թող զանոնք նախազգուշացնէ՛ որպէսզի անոնք ալ տանջանքի այս վայրը չգան»: Աբրահամ ըսաւ անոր. «Անոնք Մովսէսի Օրէնքնու մարգարէները ունին. թող անոնց պատուիրանները լսեն եւ գործադրեն»: Մեծահարուստը ըսաւ. «Ատիկա բաւական չէ, հա՛յր Աբրահամ. բայց եթէ մեռելներէն մէկը յարութիւն առնէ եւ երթայ իրենց պիտի ապաշխարեն»: Աբրահամ պատասխանեց. «Եթէ Մովսէսի Օրէնքին եւ մարգարէներուն մտիկ չեն ըներ, մեռելներէն յարութիւն առնող մըն ալ պիտի չկարենայ համոզել զիրենք»:



Ե. Կիրակի Դատաւորին

ԱՅՐԻ ԿԻՆԸ ԵՒ ԴԱՏԱԻՈՐԸ

Քաղաքի մը մէջ դատաւոր մը կար, որ ո՛չ Աստուծմէ կը վախնար եւ ո՛չ ալ մարդոցմէ կ'ամչնար: Նոյն քաղաքին մէջ այրի կին մըն ալ կար, որ անոր կը դիմէր եւ կը խնդրէր. «Իրաւունքս պաշտպանէ հակառակորդէս»:

Դատաւորը երկար ժամանակ մերժեց դատը տեսնել, սակայն ի վերջոյ ըսաւ ինքնիրեն. «Թէեւ Աստուծմէ չեմ վախնար եւ մարդոցմէ չեմ ամչնար, բայց քանի այս այրին նեղութիւն կու տայ ինձի, իր դատը տեսնեմ, որպէսզի մինչեւ վերջ քովս գալով զիս չանհանգստացնէ»:

ՓԱՐԻՍԵՑԻՆ

ԵՒ ՄԱՔՍԱԻՈՐԸ

Երկու հոգի տաճար գացին՝ աղօթելու. մէկը Փարիսեցի, միւսը՝ մաքսաւոր: Փարիսեցին մէկ կողմ կեցած, ինքնիրեն կ'աղօթէր. «Աստուած իմ, շնորհակալ եմ քեզմէ՝ որ ուրիշ մարդոց նման՝ յափշտակող, անիրաւ, շնացող չեմ, կամ այս մաքսաւորին պէս ալ չեմ: Այլ շաբաթը երկու անգամ ծոմ կը պահեմ եւ ամբողջ եկամուտիս տասանորդը տաճարին կու տամ»: Իսկ մաքսաւորը հեռուն կեցած, աչքերը առանց վեր բարձրացնելու՝ կուրծքը կը ծեծէր եւ կ'ըսէր. «Աստուած, ներէ մեղաւորիս մեղքերը»:

- Կ'ըսեմ ձեզի,- եզրակացուց Յիսուս,- մաքսաւորն է որ արդարացած տուն գնաց, եւ ո՛չ թէ Փարիսեցին, որովհետեւ ով որ իր անձը կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի, եւ ով իր անձը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ:



Նկարներ Կիրակնօրեայէն

Փետրուար 2-ին Կիրակնօրեայ Դպրոցը շարունակեց իր սովորական գործունէութիւնը, ժամը 10:30|13:00, լսարանային, դասարանային եւ երգեցողութեան պահերով: Բարենիշի նոր դրութիւն ի գործ դրուեցաւ Նախ. Ե. Երկր. Ե.:

Փետրուար 9-ին Կիրակնօրեայ Դպրոցը շարունակեց իր սովորական գործունէութիւնը, ժամը 10:30|13:00: Լսարանային պահուան ընթացքին անդրադարձան Առաջաւորաց Պահքին եւ Տեառնընդառաջին: Դասարանային պահերը ընթացան ըստ դասագրքերուն:

Փետրուար 16-ին ձինամրրիկի պատճառաւ սահմանափակ թիւով ներկայ աշակերտներն ու ուսուցիչները պատրաստուեցան Բուն Բարեկենդանին:

Փետրուար 23-ին Կիրակնօրեայ Դպրոցը շարունակեց իր սովորական գործունէութիւնը, ժամը 10:30|13:00: Լսարանային պահուան ընթացքին անդրադարձան Ս. Սարգիսին եւ Ս. Սահակ Պարթեւին: Երգեցողութեան եւ դասարանային պահեր ունեցան, եւ Փախուստի Սենեակ (Escape Room) խաղցան: Աշակերտներուն Սուրբ Սարգիսի Հալլայ բաժնուեցաւ:



Նկարներ Կիրակնօրեայէն















Մանուկներու եւ պատանիներու 2025-ի Մեծ Պահքի օրացոյց



Մարտ 2025						
Կիրակի	Երկուշաբթի	Երեքշաբթի	Չորեքշաբթի	Հինգշաբթի	Ուրբաթ	Շաբաթ
2 Բուն Բարենեւոյան	3 	4 	5 	6 	7 	8
9 	10 	11 	12 	13 	14 	15
16 	17 	18 	19 	20 	21 	22
23 	24 	25 	26 	27 	28 	29

Chips
 Հեռատեսիլ
 Համակարգիչ
 Պատտառ
 Տուրմ
 Կազային
 խմիչքներ

www.sourphagop.org | Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնորեայ Դպրոց | sundayschool.sh@gmail.com

Մարտ - Ապրիլ 2025						
Կիրակի	Երկուշաբթի	Սերեքշաբթի	Չորեքշաբթի	Հինգշաբթի	Ուրբաթ	Շաբաթ
30 	31 	1 	2 	3 	4 	5 
6 	7 	8 	9 	10 	11 	12 
13 	14 	15 	16 	17 	18 	19 
20 	Ապրիլ'ն, յաջողեցար:					

Շաբաթ
Ծառն
Հավիք

Յովհաննէս Երուսաղէմացի (Պլուզ)

Հայաստանեայց եկեղեցին Մեծ Պահքի 4-րդ Կիրակին, Տնտեսի Կիրակին, նախորդող շաբաթ օրը կը յիշատակէ Յովհաննէս Երուսաղէմացիի եւ երեք կրօնա-ազգային դէմքերու տօնը: Ահա կը ներկայացնենք անոնցմէ իւրաքանչիւրին մասին հակիրճ կենսագրական մը:

Ս. Յովհաննէս Օձնեցի

Հայոց կաթողիկոս 717-728 թուականներուն եւ ծանօթ շարականագիր: Իր հեռատես եւ իւելացի կարողութիւններով, յաջողած է արաբական խալիֆայութեան տիրապետութեան ժամանակ ամրապնդել հայ եկեղեցւոյ դիրքը եւ զերծ պահել զայն զանազան տուրքերէ եւ հարկերէ: 718-ին կազմակերպած է եպիսկոպոսական ժողով, Դուինի մէջ, ուր մշակուած են եկեղեցական 37 օրէնքներ: Ան նշանաւոր է նաեւ աղանդներու դէմ իր մղած պայքարով:

Հոչակաւոր է իր փիլիսոփայական գիտելիքներով, որոնց շնորհիւ փորձած է ամրապնդել հայ եկեղեցին:

Ս. Յովհաննէս Որոտնեցի

Ծնած է Սիւնեաց Ծղուկ գաւառի Վաղադն գիւղին մէջ, 1315-ին: Աշակերտած է Գլաձորի համալսարանին մէջ Տիրատուր վարդապետին, որու մահէն ետք փոխադրուած է Որոտանի վանքը, հոն ստանալով Որոտնեցի մականունը: Ան ծանօթ է իբր մեծ աստուածաբան, իմաստասէր, մատենագիր եւ ուսուցչապետ: Հիմնած է Տաթևի համալսարանը եւ Ապրակունիսի բարձրորակ վանական դպրոցը, որոնք դարձած են աստուածաբանական եւ փիլիսոփայական կարեւորագոյն կեդրոններ: Պայքար մղած է հայաստանեայց եկեղեցւոյ լատինացման շարժումին դէմ:

Ան իր ժառանգ թողած աշխատութիւններուն մէջ արծարծած է հայ եկեղեցւոյ արարչութեան, եկեղեցաբանութեան, հրեշտակաբանութեան խնդիրներ եւ մանաւանդ մարդկային հոգիի մասին խորհրդածութիւններ:

Ս. Գրիգոր Տաթևացի

Յովհաննէս Որոտնեցիի նշանաւոր աշակերտներէն, աստուածաբան, փիլիսոփայ եւ մանկավարժ: Իր ժամանակակիցներուն կողմէ անուանուած է «Եռամեծ վարդապետ», «վարժապետ հայոցն»: Իր կարեւորագոյն գործերէն է «Գիրք հարցմանց»-ը որ աստուածաբանութեան գործնական գիրք մըն է: Ունի նաեւ քարոզչական հաւաքածոյ հատոր մը:

Սուրբ Գրիգոր Տաթևացի ծնած է 1346-ին Վայոց Ձոր: Ան Յովհաննէս Որոտնեցիի հոչակաւոր աշակերտներէն մէկը ըլլալով՝ անոր պէս վարպետ էր լատիններէն լեզուի եւ յունական իմաստասիրութեան մէջ:

Թէեւ Գրիգոր Տաթևացի իր կեանքի մեծ բաժինը անցուցած է Տաթևի վանքէն ներս, ան այցելած է նաեւ բազմաթիւ այլ վանքեր որոնցմէ իւրաքանչիւրին մէջ արժանացած է իր աշակերտներուն յարգանքին, համարումին եւ հիացումին: Իր հանճարին շնորհիւ յաջողած է իր այցելած իւրաքանչիւր վանքէ ներս բազմացնել աշակերտներու ու հետեւորդներու թիւը:

Հաւատքի մեծ պաշտպան, մտաւորական ու հոգեւոր առաջնորդ Գրիգոր Տաթևացի հայ ժողովուրդին կողմէ կոչուած է յաճախ «երկրորդ Գրիգոր Լուսաւորիչ»:

Տաթևի Վանք



Հայաստանի հանրապետության հարավային ծայրը կը գտնուի Միւնիքի մարզը որմէ ներս կառուցուած է մարզի պատմաճարտարապետական ամենէն նշանաւոր շինութիւնը՝ Տաթևի վանքը:

Կ'ըսուի թէ ՏԱԹԵՒ բառը «Տա Թեւ» է «Թող Աստուած թեւ տա ձեզի» իմաստով, որ այդ օրերու հաւատացեալ ժողովուրդին աղօթքն էր շինողներուն, որոնք՝ այդ դժուարին օրերուն եւ դժուարին տեղ վանք կ'ուզէին կառուցել:

Տաթևի վանքը հիմնուած է 9-րդ դարուն եւ անոր ամենէն հին շինութիւնը եղած է 895 թուականին կառուցուած Սուրբ Պօղոս-Պետրոս եկեղեցին: Եկեղեցւոյ պատերը ծածկուած եղած են հարուստ որմասնկարներով որոնցմէ այժմ

քիչ բան պահպանուած է: Սուրբ Պօղոս-Պետրոս եկեղեցիէն դէպի հարաւ կառուցուած է Սուրբ Գրիգոր Եկեղեցին 1295-ին որուն ենթադրեալ ճարտարապետն է Մոսիկը:

Կը պատմուի թէ Տաթևի վանք այցելողները իրենց ուշադրութիւնը կը դարձնեն վանքի բակէն ներս, 10-րդ դարու սկիզբէն մեզի հասած հետաքրքրական յուշարձանի մը վրայ որ կը կոչուի «ճօճուող յուշասիւն» կամ «գաւազան»: Այս յուշասիւնը վանքի միակ կառոյցն է որ իր 8 մետր հասակով հանդերձ անխաթար մնացած է շրջանի բազմաթիւ երկրաշարժներէն:

14-րդ եւ 15-րդ դարերուն, Տաթևի վանքը հայկական մշակոյթի եւ լուսաւորութեան ճանչցուած կեդրոններէն մէկը եղած է ուր գործած են Տաթևի համալսարանը, մատենադարանը եւ մանրանկարչութեան դպրոցը: Տաթևի համալսարանէն ներս աշխատած են յայտնի գիտնականներ եւ աստուածաբաններ՝ ինչպէս Յովհաննէս Որոտնեցի եւ Գրիգոր Տաթևացի:

Տաթևի Ճոպանուղի

Հոկտեմբեր 2010-ին Աշխարհի երկարագոյն ճոպանուղին , 5.7 քմ երկարութեամբ, միացուց Տաթևի վանքը Հալիձոր գիւղին: Ճոպանուղին կը շարժի ժամական 37 քմ արագութեամբ եւ 11 վայրկեանէն Հալիձորէն Տաթևի վանք կը հասնի:



Ճոպանուղիէն վար դիտուած

Ճոպանուղին



Ո՞րն է ճիշդ պատասխանը Մանկապարտեզի անկիւն



Յիսուսի յաղթական մուտքը Երուսաղէմ:

Այս տարի Ծաղկազարդը Ապրիլ --ին է:

Ամբողջացո՛ւր ըստ Յովհաննէսի Աւետարանին 12.12-15

աւանակին, թագաւորդ, Սուրբ, էշ, թագաւորը, Ովսաննա՛, արմաւենիի, Յիսուս, Զատկի, բազմութիւն

Յաջորդ օրը, ժողովուրդի մեծ ----- մը, որ ----- տօնին առիթով Երուսաղէմ եկած էր, երբ լսեց թէ ----- Երուսաղէմ կու գայ, ----- ճիւղեր առաւ եւ Յիսուսը դիմաւորելու ելաւ, բարձրաձայն աղաղակելով. «-----, օրհնեալ ըլլայ ան՝ որ կու գայ Տիրոջ անունով, Իսրայէլի -----»:

Յիսուս -- մը գտնելով՝ նստաւ անոր վրայ, ինչպէս որ ----- գիրքերուն մէջ գրուած է.-

«Մի՛ վախնար, ո՛վ Երուսաղէմ, Սիոնի՛ աղջիկ. ահա ----- քեզի կու գայ իշու մը ----- վրայ նստած:

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Նախակրթարան Ա., Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

1.- Որո՞ւ տօնը այս տարի կը տօնենք Մարտ 29-ին:

- ա. Ս. Ղեւոնդեանց քահանաներուն
- բ. Ս. Աբգար թագաւորին
- գ. Ս. Վահան Գողթնացիին
- դ. Սուրբ Քառասուն Մանուկներուն

2.- Այս տարի ե՞րբ կը տօնենք Տնտեսի Կիրակին:

- ա. Փետրուար 7
- բ. Փետրուար 26
- գ. Մարտ 4
- դ. Մարտ 23

3.- Այս տարի ե՞րբ է Միջինքը:

- ա. Մարտ 26
- բ. Մարտ 10
- գ. Փետրուար 16
- դ. Փետրուար 19

4.- Այս տարի ե՞րբ է Ծաղկազարդը:

- ա. Ապրիլ 12
- բ. Մարտ 1
- գ. Ապրիլ 10
- դ. Մարտ 28

5.- Ս. Գրիգոր Տաթևացի ո՞ր վանքին մէջ անցուց իր ժամանակին մեծագոյն բաժինը:

- ա. Սանահին
- բ. Հաղբատ
- գ. Նարեկ
- դ. Տաթև

6.- Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ 13 տարի ուր քաջաց:

- ա. Խոր Վիրապ
- բ. Տաթևի Վանք
- գ. Տրդատ թագաւորի պալատին մէջ
- դ. Սանահին

7.- Հայերէնով «Telepherique»-ին կ'ըսենք

Ճ-----:

8.- Մեծ Պահքի ընթացքին ի՞նչ վիճակի մէջ կը քաջ Սուրբ Խորանին վարագոյրը:

- ա. Բաց
- բ. Գոց

9.- Հետեւեալներէն ո՞ր մէկը Յիսուսի պատմած առակներէն չէ:

- ա. Անառակին
- բ. Տնտեսին
- գ. Դատաւորին
- դ. Գալստեան

10.- Միջինքը շաբթուան ո՞ր օրը կ'ըլլայ:

- ա. Երկուշաբթի
- բ. Երեքշաբթի
- գ. Չորեքշաբթի
- դ. Հինգշաբթի

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Դ., Ե. եւ Զ. դասարաններու անկիւն

1.- Որո՞ւ տօնը այս տարի կը տօնենք Մարտ 8-ին:

- ա. Ս. Ղեւոնդեանց քահանաներուն
- բ. Ս. Գրիգոր Լուսաւորիչ մուտն ի Վիրապ
- գ. Ս. Գրիգոր Լուսաւորիչ ելն ի Վիրապ
- դ. Սուրբ Թեոդորոս Զօրավարին

2.- Ծաղկազարդին նախորդող Շաբաթ օրը որո՞ւ յիշատակը կը տօնենք:

- ա. Ղազարոսի Յարութեան
- բ. Յիսուսի Յարութեան
- գ. Յիսուսի Երուսաղէմ մուտքին
- դ. Լերան քարոզին

3.- Այս տարի Մարտ 22-ին ո՞ր սուրբերուն տօնը կը տօնենք:

- ա. Ս. Գրիգոր Տաթեւացի
- բ. Ս. Յովհաննէս Երուսաղէմցի
- գ. Ս. Յովհաննէս Որոտնեցի
- դ. Ս. Յովհաննէս Օձնեցի

4.- Միջինքը ո՞ր երկու Կիրակիներու մէջի Չորեքշաբթի օրուան կը հանդիպի:

- ա. Անառակին եւ Տնտեսին
- բ. Տնտեսին եւ Դատաւորին
- գ. Դատաւորին եւ Գալստեան
- դ. Տնտեսին եւ Գալստեան

5.- Հետեւեալներէն որո՞ւն մասին կը կարդանք Ղուկաս 18.1-8-ի մէջ:

- ա. Դատաւորին
- բ. Տնտեսին
- գ. Գալստեան

դ. Անառակին

6.- Քառասուն Մանուկները ո՞ր շրջանի տարբեր քաղաքներէն էին:

Փոքր ----

7.- Հետեւեալներէն ո՞վ Օձուն գիւղին մէջ ծնած էր:

- ա. Գրիգոր Տաթեւացի
- բ. Ս. Յովհաննէս Երուսաղէմցի
- գ. Ս. Յովհաննէս Որոտնեցի
- դ. Ս. Յովհաննէս Օձնեցի

8.- Հետեւեալներէն ո՞վ Վայոց Ձորի մարզին մէջ ծնած էր:

- ա. Գրիգոր Տաթեւացի
- բ. Ս. Յովհաննէս Երուսաղէմցի
- գ. Ս. Յովհաննէս Որոտնեցի
- դ. Ս. Յովհաննէս Օձնեցի

9.- Երբ աշխարհի ամենէն երկար ճոպանուղին (téléphérique) նստիս ո՞ր վանքը կը հասնիս:

10.- Երբ ըսենք «մուտն ի Վիրապ» կամ «ելն ի Վիրապ», ո՞ր սուրբին մասին կը խօսինք:

Ս. Գ-----Ն

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Երկրորդականի անկիւն

1.- Ո՞ւր կը կարդանք. «Երբ ծով կը պահէք, տրտումներես մի՛ ըլլաք կեղծաւորներուն նման...»:

- ա. Մատթէոս 6.16
- բ. Մարկոս 6.16
- գ. Ղուկաս 6.16
- դ. Յովհաննէս 6.16

2.- Ո՞վ ըսած է.«Մէկը կարող է կենդանիի միս չուտել, բայց անընդհատ իր եղբօր միսը ծամել»:

Ե-----

3.- Գրէ՛ Պահքի 7-ը Կիրակիները ճիշդ շարքով:

- ա. Բուն Բարեկենդան
- բ.
- գ.
- դ.
- ե.
- զ.
- է.

4.- Վարդանանցէն քանի՞ օրեր ետք Բուն Բարեկենդան է:

- ա. 3
- բ. 10
- գ. 7
- դ. 17

5.- Հետեւեալներէն ո՞ր մէկը Յիսուսի պատմած առակներուն մաս չի կազմեր:

- ա. Դատաւորին
- բ. Տնտեսին
- գ. Գալստեան

դ. Անտոակին

6.- Սեբաստիոյ մէջ կառուցուած էր քառասուն Գմբեթանի տաճար մը: Այս տաճարը մինչեւ ե՞րբ կանգուն մնացած էր:

Լ-----բը

7.- Հետեւեալներէն ո՞վ հիմնած է Տաթեւի համալսարանը:

- ա. Գրիգոր Տաթեւացի
- բ. Ս. Յովհաննէս Երուսաղէմցի
- գ. Ս. Յովհաննէս Որոտնեցի
- դ. Ս. Յովհաննէս Օձնեցի

8.- Հետեւեալներէն ո՞վ Կաթողիկոս եղած է ու մշակած 37 եկեղեցական օրէնքներ 718-ի Դուինի մէջ կազմակերպուած եպիսկոպոսական ժողովին:

- ա. Գրիգոր Տաթեւացի
- բ. Ս. Յովհաննէս Երուսաղէմցի
- գ. Ս. Յովհաննէս Որոտնեցի
- դ. Ս. Յովհաննէս Օձնեցի

9.- Պլուզ կը նշանակէ գաճաճ կամ կարճահասակ: Գրէ՛ Պլուզին լման անունը:

Յ----- Ե-----

10.- Ամբողջացո՛ւր. Ս. Յովհաննէս Որոտնեցին պայքար մղած է հայաստանեայց եկեղեցւոյ լ----- շարժումին դէմ:

Մեծ պահքը երբեակ իմաստով*

Մեծ պահքի քառասնօրեայ շրջանը եկեղեցւոյ հաւատացեալներուն համար հոգեկան վերանորոգութեան սքանչելի առիթ մըն է: Երբ անիկա գիտակցօրէն ապրուի հոգեկան ազնուացման, առհասարակ մարդ անհատի երջանկութեան ամենէն ազդու եւ բարերար միջոցը կը դառնայ: Մեծ պահքը գիտակցօրէն ապրիլ կը նշանակէ.-

1. Աղօթքը դարձնել մեր կեանքի կեդրոնական առանցքը

Առաջին հերթին, աղօթել առանձնապէս տունին կամ ուրիշ այլ հանդարտ միջավայրի մէջ, ուր ինքնամփոփումի, առանձին ըլլալու, ինք իր խղճին հետ խօսակից դառնալու կարելիութիւնը կայ: Կ'անդրադառնա՞նք թէ մարդ առօրեայ կեանքին մէջ որքան գրաւուած է ուրիշներով...: Բայց անհրաժեշտ է որ երբեմն ինք իր անձին հետ առանձին ըլլայ, եւ Աստուծոյ ամենատես աչքին ներքեւ, դիտէ ու քննէ ինքզինք...:

Խոկումի, ինքնանդրադարձումի, առանձնութեան, աղօթքի պահերուն, երբ ոչ ոք մեզի կը նայի, ուրիշ մէկու հետ կ'ապ չունինք, երբ մեր աչքերը մեր անձերուն վրայ կը սեւեռենք, այն ատեն կը յաջողինք սրտբացօրէն, ճշմարտօրէն եւ ջինջ յստակութեամբ մենք զմեզ տեսնել, ճանչնալ եւ սրբագրել կամ վերանորոգել...:

2. Պահք բռնել

Աղօթելու հետ առնութիւն եւ բացի աղօթելէ անհրաժեշտ է պահք բռնել, ինչպէս ժողովրդական արտայայտութեամբ կ'ըսուի: Ի՞նչ կը նշանակէ պահք բռնել...:

Կրօնական ճշգրիտ եւ խորունկ իմաստով պահքը այնպիսի արարք մըն է որ մարդը կ'առաջնորդէ ինքզինք կամաւորապէս զրկելու որոշ զգայարանական, նիւթական հաճոյքներէ եւ ճոխութիւններէ: Առիթ կու տայ անոր մտածելու հոգեկան, բարոյական կեանքի մշակման մասին...:

Յիսուսի կեանքի պատկերին մէջ մենք կը տեսնենք որ Ան քառասուն (40) օր անապատի մէջ առանձնացաւ, ինքզինք կերակուրներէ զրկեց, հոգեպէս զօրանալու համար: Աւետարանին մէջ մենք կը կարդանք թէ Ան պատուիրեց Իր հետեւորդներուն եւ ըսաւ որ պէտք է պահք բռնէք բայց ոչ «ի ցոյց մարդկանց», այլ ներքին ինքնամփոփումով, որպէսզի պահքը արժէք ստանայ եւ ծառայէ անձին վերանորոգութեան...:

3. Բարիք Գործել

Մեծ պահքը շրջանը գիտակցօրէն ապրիլ կամ գործնապէս իմաստաւորել կը նշանակէ ոչ միայն ներանձնական աղօթք ընել կամ պահք բռնել, այլ նաեւ որոշ գործեր կատարել, դրական արարքներ գործել, որոնց նպատակն ու արդիւնքը բարիք ըլլան, եւ ոչ թէ միայն անհատին, այլ իր նմանին, ուրիշին երջանկութեան ծառայեն:

Հետեւաբար, Մեծ Պահքը քառասնօրեայ շրջանը քրիստոնէաբար եւ հայօրէն ապրելու համար ունինք երեք գլխաւոր պարտաւորութիւններ.

- 1.- Աղօթել՝ առանձնապէս եւ հաւաքաբար
- 2.- Պահք բռնել ինքնազրկումի սկզբունքով
- 3.- Բարիք գործել՝ ծառայութիւններ մատուցանելով:

***հատուածներ՝ «Պարզ խօսքեր՝ պարզ հոգիներու համար» Գարեգին Ա. Ամենայն Հայոց կաթողիկոս**